

Մրցույթի հայտարարություն
<<Մեղրու թիվ 2 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն՝ <<Մեղրու թիվ 2 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ -ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են <<Մեղրու թիվ 2 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ -ում

2022 թվականի_մայիսի 16 -ից մինչև հունիսի 3 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9/00 -ից մինչև ժամը 15/00 -ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունիսի 17-ին՝ ժամը 14 /00 -ին, <<Մեղրու թիվ 2 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ, ք. Մեղրի, փողոց՝ Ջորավար Անդրանիկի 10

Տեղեկությունների համար դիմել՝ հեռ. 077525297, anna.aleksanyan.87@mail.ru